Իսկ նախագահներ Ըլինթոն եւ Արաֆաթ նոյնպէս պիտի վճարեն, մասնաւոր եթէ համաձայնութեան չյառաջելու պատճառով ստեղծուի վերոյիշեալ պայթուցիկ վիճակը: Չախողութիւնը կրնայ օգտագործուիլ Ըլինթոնի եւ իր Գեմոկրատական Կուսակցութեան դէմ յառաջիկայ նախագահական ընտրութիւններուն ընթացքին: Չախողութիւնը կրնայ վախճնել նաեւ Սպիտակ Տան իր յաջողը եւ պատճառ համոզեցան որ ան կենայ Միջին Արեւելքի կրակին մէջ, իր «մտածելը այրելը»: Չախողութիւնը կրնայ օգտագործուիլ նաեւ Արաֆաթի դէմ, ինչ որ կրնայ յանգիլ անոր համակիրներուն եւ ընդդիմադիրներուն իրենց դէմ լարման:

Ասկէ կարելի է հետեցնել, որ վերոյիշեալ կացութեան գիտակցումին պատճառով կարելի կը դառնայ ՔԷՄՓ ՏԷՅՎԻՏԻ յաջողութիւնը: Նոյն աղբիւրները կը պատասխանեն, թէ երեք ղեկավարներն ալ կը փափաքեն յաջողիլ, սակայն անկախ դժուար է, եւ նոյնիսկ անկարելի:

ՍԱՐԳԻՍ ՆԱՌԻՍ «Նահար» 26 Յուլիս 2000

«ՊԱՂԵՍՏԻՆԵՑԻՆ ԱՅԼԵՒ ՈՉԻՆՉ ՈՒՆԻ ՏԱԼԻՔ, ԻՍԿ ԻՍՐԱՅԷԼԱՑԻՆԵՐՈՒՆ ՀԵՏ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՏԱԿԱՒԻՆ ԵՐԿԱՐ ՊԻՏԻ ՏԵՒԵՆ»

Կ'ԸՍԵ ՎԱՐՉԱՊԵՏ ՄԵԼԻՄ ՀԸՍ

Լիբանանեան «Նահար» թերթը վարչապետ Սէյիմ Հըւսի հարց տուաւ Միացեալ Նահանգներու նախագահ Պիլ Ըլինթոնի հովանաւորութեամբ ՔԷՄՓ ՏԷՅՎԻՏԻ մէջ տեղի ունեցած պաղեստինեան Խորաշխյեան բանակցութեան ձախողութեան առնչութեամբ Լիբանանեան կառավարութեան կեցուածքին մասին: Հըւս պատասխանեց.

«Նախատեսուած չէր, որ ՔԷՄՓ ՏԷՅՎԻՏԻ բանակցութիւնները որեւէ վաղի յառաջիկայ արձանագրէին պաղեստինեան գիծին վրայ: Նախապէս բազմիցս ըսած են, որ պաղեստինեան հարցը ամէնէն դժուար եւ ամէնէն բարդ հարցն է, եւ ան անոնցմէն է, որոնք կը կարծեն, թէ այս հարցին գծով ամէնէն ուշ լուծում պիտի գտնուի Խորաշխյի հետ: Պաղեստինեան հարցով բանակցային գործընթացը կրնայ տարիներ տեւել, այս մէկը կ'ըսեն» հիմնուելով պահանջան տուեալներու վրայ, որոնցմէ կարելի է երկուքը:

ա. Վերջնական լուծման բանակցութիւններուն մէջ առաջադրուած կարգ մը հիմնական հարցեր իսրայէլացիներուն կարծիքով կը կրեն հին կտակարանեան (Թորա) բնույթ. անոնցմէ է օրինակ Երուսաղէմի հարցը, ինչպէս նաեւ՝ սահմաններու հարցը, որովհետեւ Խորաշխյ գործակալնորէն տակաւին առանց սահմանի պետութիւն մըն է արեւելեան կողմէն:

Խորաշխյ Հին Կտակարանին մէջ ոչ մէկ սահման ունի եւ իսրայէլացիները իրենք է, որ կը խօսին Նեղոսէն մինչեւ Եփրատ պետութեան մը մասին: Հոսկէ է իսրայէլեան շարունակական սպառնական ուժը Արեւմտեան Արեւելի հեռաւորաւ գծով պաղեստինցիներուն հետ տեղի ունեցած բանակցութիւններուն ընթացքին:

Կը լսենք 3.5 առ հարիւրէն կամ 1.3 առ հարիւրէն հեռաւորաւ մասին, բայց սակայն ցոյց կու տայ, որ իսրայէլացիները տակաւին չկրցան հաշտուիլ պաղեստինցիներուն հետ սահման ունենալու գաղափարին հետ:

Այս առնչութեամբ ինքզինք պարտադրող հարցումը այն է, որ ի՞նչպէս կարելի է բանակցիլ Խորաշխյի հետ այնպիսի հարցերու շուրջ, զորս իրենք կը դաւանին իբրեւ «սուրբ գրային»:

բ. Բանակցութիւնը անտուրի գործընթաց է: Ով որ բանակցիլ կ'ուզէ, պէտք է իր ձեռքին ունենայ խաղաթուղթեր, զորս կարելի է ներկայացնել պահանջներուն փոխարէն:

Իսկ պաղեստինցի չի թուիր, թէ կը բանակցի, այլ կը պահանջէ, եւ այժմ ո՛չ մէկ խաղաթուղթ ունի իր ձեռքին, որ կարելի է ներկայացնել իր պահանջներուն փոխարէն, որովհետեւ ան բացառաբար իսրայէլացիները Օսլոյի համաձայնութեան ընթացքին:

Պաղեստինցիները ճանչցան Խորաշխյը իբրեւ պետութիւն, իրենց ազգային ուխտին շնչեցին այն յողուածները, որոնցմով կը սպառնային Խորաշխյի եւ շնչեցին Ինթիֆատային: Այս պատճառով ակաւառեւ կ'ըլլանք, որ իսրայէլացի բանակցողը կը վարուի այնպէս մը, որ կարծես իրմէ կը պահանջուի պաղեստինցիներուն տալ առանց որեւէ փոխադարձ վիջումի:

Հըւսի հարցուեցաւ, ի՞նչ է պաղեստինեան Խորաշխյեան բանակցութիւններու շուրջ ստեղծուած մթնոլորտը շրջանցելու ընտրանքը: Հըւս պատասխանեց. «Իւրաքանչիւր արաբական երկիր ունի իր պայմանները, իսկ Լիբանան դիւանագիտութեան միջոցով գիտցաւ ինչպէս վարուիլ իսրայէլեան բռնազրաւումին դէմ: Աշխարհի մէջ գտնուող ոչ մէկ ուժ կրնայ կենալ կամքին դիմաց ժողովուրդի մը, որ որոշած է կառչիլ իր սպառնութեան, իրաւունքին եւ արժանապատուութեան»:

«ՆԱԿԱՐ» 28 Յուլիս 2000 Պարտասպեց՝ ժ. 3.

«ԱՉՂԱԿ»Ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻՒՆԵՐԸ «ԱՉՂԱԿ»ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն. - 268526, 260115 եւ 241274:

# Կնոջական



ԱՆՆՆԱԳԻՏԱԿԱՆ

## ԻՆՉ ԳԻՏԵՆԵՐ ՀԱՒԿԻԹԻՆ ՄԱՍԻՆ

**ԱՆՆՆԱԿԱՆ ԱՐժԵՐ**  
 Հակելիթ մը մատակարարակն 50-80 կրամ կը կշռէ: Ան բաղկացած է չաքարէ (0,6 կրամ), իւղէ (12 կրամ), բնասպիտէ (14 կրամ), հանքային աղերէ (0,3 կրամ) ինչպէս նաեւ՝ ջուրէ եւ կենսաանոթներէ (Ա, Պէ1, Պէ2, Տէ, էօ):  
 Հակելիթին իւղը անհաւասար ձեւով բաժնուած է: ձերմկուցին մէջ իւղ գոյուլներն չունին, իւղը խտացած է ղեղնուցին մէջ (7 կրամ): Հակելիթ մը միջին հաշուով 78 քալորի ունի:

**ՂԻՐԱՍԱՐՈՒ ԹԵ ԴՅՈՒԱՐԱՍԱՐՈՒ**  
 Հակելիթին ղիւրամարս կամ դժուարամարս ըլլալը կախեալ է անոր պատրաստութեան ձեւէն:  
 Այլըրիւր խառնուած հակելիթ (կարկանդակի պատրաստութիւն եւ այլն...) ղիւրամարս է, մինչդեռ խաշած հակելիթը դժուարամարս է. ան ստամոքսին մէջ շուրջ երկու քուրակէս ժամ կը մնայ մինչեւ մարսուիլը:  
 Շատ ղիւրամարս կ'է կ'ս թոյլ հակելիթը, մինչ դժուարամարս է ձուածեղը, որովհետեւ իւղը կը դանդաղեցնէ մարսողութեան րնթացքը:

**ԱՆՀԱՆՂՈՒԹՅՈՒԹԻՒՆ**  
 Հակելիթին համար կ'ըստուի, որ մարսողական խանգարումներ կը ստեղծէ: Խորքին մէջ հոսմ հակելիթին ձերմկուցն է անմարսողութեան պատճառը:  
 Ինչ կը գերաբերի ոմանց պարագային հակելիթին պատճառած գերզգայնութեան, ան տուրմին, ելակին կամ լոլիկին չափ միայն գերզգայնութիւն կը պատճառէ:  
 Նշենք նաեւ որ հակելիթին պարունակած քրոմիոսթերոլը որեւէ վտանգ չի ներկայացներ առողջ մարդուն:  
 Եզրափակելով՝ կ'ընենք ըսել, որ չափաւոր քանակութեամբ հակելիթ ոչ ոքի կը վնասէ, իսկ ճաշերու եւ կարկանդակներու մէջ գործածուելու պարագային անիկա շատ աւելի ղիւրամարս կը դառնայ:

**ՓՃԱՅՈՒՄ**  
 Հակելիթ մը կը փճանայ գանգան պատճառներով:  
 Կեղեւին աղտոտութիւնը, ճեղքերը, տաքը, խոնաւութիւնը, պաղը (սառելու պարագային) եւ լոյսը կը վնասեն հակելիթին:

**ԹՈՒՄԱԲՈՐՈՒՄՆԵՐ**  
 Հակելիթը ծանր թունաւորումներ կրնայ պատճառել եթէ գայն գործածենք ուտելիքներու պատրաստութեան մէջ, առանց ստուգելու թարմութիւնը, եփելու ջերմաստիճանը եւ այլն...

Գնելու ժամանակ պէտք է վստահ ըլլանք, որ հակելիթը թարմ եւ մաքուր է, իսկ տուն բերելէ ետք երբեք չմաքրենք գանգանք եւ սառնարանին մէջ չարենք սուր բաժինը ղէպի վար:

**ՍՊԱՌՈՒՄ**  
 6-10 ամսու երեխան կրնայ ուտել հակելիթ, որ սակայն շատ թարմ պէտք է ըլլայ, ինչ կը վերաբերի քանակին, պէտք է հետեւիլ մանկաբուժին թելադրանքին:  
 Չափահաս մը շարաթը 5 հակելիթ կրնայ ուտել, պայմանաւ որ իւրաքանչիւր անգամ թիւր երկու քուրակէս ղէպի վար:

**ԻՆՆԱԳԻՐ**

## ՄԱԾՈՒՆՈՎ ՍՄՐՈՒԿ

**Պատրաստութեան համար անհրաժեշտ են.**

Մէկ քիւծ լոլիկ:  
 Խոշոր սմբուկ մը:  
 500 կրամ մածուց:  
 Սոյս մը:  
 2 պճեղ սխտոր:  
 Ֆրանսական պակէթ հաց մը:  
 Ապուրի 2 դգալ սնուցար:  
 Ապուրի 3 դգալ բուսական ձէթ:  
 Կես կիտրոնի հիւր:  
 Աղ, սեւ պղպեղ:

**Պատրաստութեան կերպը.**

Սմբուկները խորանարդածե կտրտել աղել եւ արեփոն պարզել:  
 Լոլիկները ջատ մանր ջարդել:  
 Սոյսը մանրել եւ քիչ մը ձէթի մէջ կարմրցնել, աւելցնել լոլիկը, եփել եւ վերջապէս՝ աւելցնել կիտրոնի հիւրը, աղը եւ սեւ համեմը:  
 Սմբուկը տապակել եւ ծծու թուղթի վրայ փոխադրել, նոյն ձեւով ալ տապակել կտրտուած պակէթը եւ դարձեալ ծծու թուղթի վրայ փոխադրել:  
 Սխտորները կեղուել, ճգմել եւ մածուցին խառնել:  
 Սնուցարը քիչ քանակութեամբ, տաք ձէթի մէջ կարմրցնել եւ մէկ կողմ ձգել:  
 Առանձին՝ առանձին սեղան բերել՝ կարմրած հացերը, սխտորով մածուցը, տապակուած սնուցարն ու լոլիկով սմբուկը:  
 Ուտելու ժամանակ նախ պնակին յատակը դնել քիչ մը կարմրած հաց, վրան՝ սմբուկը, մածուցը եւ վերջապէս՝ գորդարել սնուցարով:  
 Բարի՛ ախորժակ:

**ԾԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ**

«Ազդակ»ի մէջ ազգային կամ առնչութեամբ ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիծը ընթացիկ գիտով (հաստատութեանց պարագային՝ հասցեատրամբ) պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատանքով պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատանքով:

### ՓՈՐՁ ԸՆԴՅԱՐԱՆ

## ԻՆՉ ՊԻՏԻ ԸՆԷԻՔ ԹԱՅԹԵՆԻՔԻՆ ՎՐԱՅ ԳՏՆՈՒԵԼՈՒ ՊԱՐԱԳԱՅԻՆ

Երբ 14 Ապրիլ 1912ին Թայթեյիքին վրայ գտնուէիք եւ սառցալեռան արկածը պատահէր, ի՞նչ պիտի ըլլար ձեր հակազդեցութիւնը, իրարանցումը, յուսալքումը՝ փախուստ, վեհանձնութիւնը...  
 Իմանալու համար պատասխանեցէք այս փորձ-հարցարանին՝ ընտրելով 4 հաւանական պատասխաններէն յարմարագոյնը, ապա կարդացէք վերջնական պատասխանը:

- 1 -  
 Վերելակին մէջ էք եւ ելելու արկածն ուսանքը կ'ընդհատուի:  
 ■ Ձեր աչքերը կը փակէք եւ խորունկ շունչ կ'առնէք:  
 ★ Շուրջիններուն հետ կը կատակէք:  
 ▲ Կը փորձէք իւր մը գտնել:  
 ● Ամբողջ ուժով կը պոռաք:

- 2 -  
 Ոչ մ'օտիկ անձ մը ձեզմէ կը խնդրէ ձեր տունը գլխաւորել:  
 ★ Ձեր նկատարը կը տրամադրէք անոր:  
 ● Կտրուկ ձեւով կը մերժէք:  
 ▲ Կը թելադրէք ուրիշ բարեկամի մը ղիմելը:  
 ■ Ձեր համարձակի մերժել եւ ղինք հիւրասենեակը կը քնացնէք:

- 3 -  
 Պիտի փափաքէիք ըլլալ:  
 ★ Նշանաւոր Բոլթակից մը:  
 ■ Հոգեվերլուծող մը:  
 ▲ Աստղագետ մը:  
 ● Մարտիկներու աստղ մը:

- 4 -  
 13 բուսական  
 ▲ Լորթո իսպաիւր յարմարագոյն թիւն է:  
 ● Չարագուշակ թիւ է:  
 ★ Սովորական բուսական մըն է:  
 ■ Յիսուսին վերջին ընթրիքը կը լի-շեցընէ:

- 5 -  
 Պաշտօնակիցի մը նկատմամբ անարգարութիւն կը գործուի:  
 ★ Զօրակցութեան լանձնախումբ մը կը ստեղծէք:  
 ▲ Անոր կը թելադրէք, որ երբայ եւ պատասխանատուին հետ հասկցուի:  
 ■ Ինչքան ձեզ անգոր կը համարէք:  
 ● Ուրախ էք, որ ինչորոշ առարկայ անձը դուք չէք:

- 6 -  
 Մարտիկներու սրահին մուտքին երկար շարք մը կը նկատէք:  
 ▲ Մարքը չէք յարգեր եւ բոլորէն առջ կ'անցնէք:  
 ★ Ուրիշ սրահ մը կ'ուղղուիք:  
 ● Ձեր կարգը կը սպասէք:  
 ■ Կ'որոշէք ուրիշ օր մը գալ:

- 7 -  
 Էլիֆէլի աշտարակին վրայ էք եւ կը նկատէք, որ երեխայ մը իյնալու վտանգին տակ է:  
 ● Կը պոռաք առանց գործնական քայլ մը առնելու:  
 ★ Կը շտապէք գայն փորձանքէ փրկելու համար:  
 ▲ Անգիտակից կը նկատէք պղտիկին ծնողը:  
 ■ Պահակին լուր կու տաք:

- 8 -  
 Ոմանք ձեզ կրնան մեղադրել իբրեւ:  
 ▲ Անճանաչ:  
 ● Ամբողջ:  
 ■ Ցրուած:  
 ★ Անգիտող:

- 9 -  
 Ներկայ կը գտնուիք ընթրիքի մը, որուն հրաւիրեալները համակրելի անձն են:  
 ★ Կը ջանաք ազնիւ ըլլալ՝ յարգելու համար հրաւիրողները:  
 ▲ Քիչ կը մասնակցիք եւ կանուխ կը մեկնիք:  
 ● Մի միայն մտիկ կ'ընէք:

■ Շատ բնական ձեւով կը հակադրէք:  
 - 10 -

Բացի նաեւ, փոխադրական ո՞ր միջոցը կը նախընտրէք:  
 ■ Օդանաւը:  
 ▲ Հեծանակը:  
 ★ Ինքնաշարժը:  
 ● Քալիքը:  
 - 11 -

Ձեր նկատարը իրագործելու համար:  
 ■ Կ'աղօթէք:  
 ★ Կը պայքարիք:  
 ● Ուրիշին օժանդակութեան կը դիմէք:  
 ▲ Ամէն բան ընելու պատրաստ էք:  
 - 12 -

Ո՞ր կենդանին կը նախընտրէք:  
 ★ Շունը:  
 ■ Կատուն:  
 ● Զին:  
 ▲ Առիւծը:  
 - 13 -

Ի՞նչու ըստե՞ք ձեր կ'ըսէք:  
 ▲ Շնորհակալ եմ:  
 ● Ոչ:  
 ■ Միշտ:  
 ★ Օգնութիւն:  
 - 14 -

Ովքե՞ր ձեր հիացմունքի առարկան են:  
 ★ Հրէջները:  
 ▲ Հետազօտողները:  
 ■ Թիւթքի կրօնաւորները:  
 ● Բժիշկները:  
 - 15 -

Այս իրերէն մէկը ընտրեցէք:  
 ■ Խաչ մը:  
 ▲ Փրկօղակ մը (պոռթկ):  
 ● Յուսուք մը:  
 ★ Լաստ մը:

### ՊԱՏԱՍԽԱՆ

◆ Երբ ձեր պատասխաններուն մեծամասնութիւնը ★ է:  
 Թայթեյիքին վրայ կրնայիք ըլլալ անճանակամ մաս կազմող այն հետեւներէն, որոնք իրենց կեանքը վտանգելով կը ջանային փրկել կարելի եղածին չափ մեծ թիւով համբողջներ եւ յատկապէս երեխաներ:  
 Սովորական կեանքի մէջ անճանաչ եւ ծառայաւոր անձ մըն էք:

◆ Երբ ձեր պատասխաններուն մեծամասնութիւնը ■ է:  
 Թայթեյիքին վրայ գտնուելու պարագային, երբեք պիտի չպայքարիք, այլ պիտի բաւարարուէիք աղօթելով եւ հեզօրէն պիտի ենթարկուէիք ձեր հակապատրաստութեան:  
 Սովորական կեանքի մէջ ղիշող եւ տեղի տուող անձ մըն էք:

◆ Երբ ձեր պատասխաններուն մեծամասնութիւնը ▲ է:  
 Թայթեյիքին վրայ գտնուելու պարագային, մինչեւ ձեր վերջին շունչը պիտի պայքարիք վերապրելու եւ սեւ ճակատագրին չհետարկուելու համար: Ձեր վերապրելու պայքարին ընթացքին ոչ ոքի վնաս, բշտամուրիւն կամ անիրաւութիւն պիտի պատճառէ:  
 Սովորական կեանքի մէջ արկածախնդիր կեանքի սիրահար մըն էք:

◆ Երբ ձեր պատասխաններուն մեծամասնութիւնը ● է:  
 Թայթեյիքին վրայ գտնուելու պարագային, բոլոր միջոցներուն եւ խորամանկութիւններուն համար պիտի դիմէիք ձեր կեանքը փրկելու համար, արկածախնդրութիւնը ձայրէ ձայր ապրելու եւ ի վերջոյ վերապրողներէն ըլլալու համար:  
 Իսկական կեանքի մէջ գործնական միտք ունիք եւ քիչ մը պատեհապաշտ էք:

### ԱՅԼԱՅԱՆ

## ՈՒՄԱ ԹԵՐՄԱԸ

Ամերիկացի դերասանուհի Ումա Թերման, որ վերջերս Ֆաննի փաուստօնին բոլոր լուսարձակները իր վրայ կեդրոնացուց, Հանքոմի վերջին անուշահոտին՝ «Միտաքս»-ին (հրաշք) դեպքանուհի ընտրուեցաւ:  
 Առաջին անգամ ըլլալով է, որ Հանքոմ ամերիկացի մը կ'ընտրէ իր մէկ անուշահոտը ներկայացնելու համար: Այսպէսով, Ումա Թերման կը յաջորդէ Ժիլիէթ Պինոչին եւ Իգապիլյա Ռոսելինին, յաւապիլյայ աշնան ու «Միտաքս» աշխարհին ծանօթացնելու համար:



### ՄԱՏՈՆԱ

Մայամիի մէջ գտնուող Մատոնային շքեղ դղեակը, որ նշանաւոր երգչուհին գնած էր 4,9 միլիոն տոլարի, վերջերս ծախուեցաւ 7,5 միլիոն տոլարի, Կանթրի IV անունով գայլաշունի մը...  
 Առուծախի գործողութիւնները կատարեց Կանթրի Քորփորէյշըն ընկերութիւնը, որ կը գտնուի Պահամասի մէջ եւ ուրիշ կը վարէ աշխարհի ամէնէն հարուստ շան հարստութիւնը:



Այսուհետեւ Կանթրի IV կրնայ ազատ-համարձակ վաճել 780 քառակուսի մեթր տարածութեամբ դղեակը, որ բաղկացած է 8 սենեակ եւ 8 քաղնիքէ...  
 Նշենք, որ Կանթրի IV այս հարստութիւնը ծանանգած է իր հօրմէն՝ Կանթրի III, որ իր կարգին ծանանգած է գերմանացի իշխանուհի մը: Կանթրի IV արդէն իսկ «Կինեսա»ի մէջ կը յիշուի իբրեւ աշխարհի ամէնէն հարուստ շունը, որուն հարստութիւնը կը հասնի շուրջ 200 միլիոն տոլարի...  
 ժԱՆ ՊԱՐԹԷ ՈՅ ԵՒ Ա

Յրանսական նորածնութեան շրջանակները կորսնցուցին նշանաւոր գլխարկագործ Ժան Պարթէն, որ քանի մը ամիս առաջ մեռաւ 80 տարեկանին:  
 Պարթէ մինչեւ վերջերս կը գործակցէր Շանչի, Մոնթանա, Սոնիա Ռիփլի նորածնութեան տուններուն հետ եւ կը յղանար ու կ'իրագործէր անոնց գլխարկները:  
 Ժարթի Գեներտի, Մոնթանայի կ'ըլլայ իշխանուհին, Ֆարաճ Տիպա, Լիզ Թէյլորը, Քաթրին Տէսնէօլ եւ նոյնիսկ Մայքըլ Ճէքսթըր կրած են Պարթէի նշանաւոր գլխարկները:

### ՎԱՆԻԼԸ՝ ՆԻՀԱՐՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Լոնտոնի Սէյնթ Ճորժ'ս հիւանդանոցին կողմէ կատարուած ուսումնասիրութեան մը համաձայն վանիլի փաշերու (ղարմանումի նպատակով մարմնին վրայ փակցուող կպչուն թուղթեր) գործածութիւնը կրնայ նիհարցնել:  
 Արդարեւ, ուսումնասիրութիւնը ցոյց տուած է, որ վանիլի հոտ արձակող փաշերը ենթակային մօտ գաղափարէն կը պակասեցնեն քաղցրեղէն ուտելու ախորժակը, մասնաւորաբար կը նուազեցնեն տուրմ ուտելու անսանձիկ փափաքը...  
 Այս փաշին առաւելութիւններն ու անպատեհութիւնները պիտի քննուին Էտիոպիոյի (Սկոթլանդ) մէջ ներկայիս կայացող Մոնթագլիոնութեան 13րդ համագումարին ընթացքին: Իսկ փաշերը շուկայ պիտի իջնեն այս տարեկներին:

Պատրաստեց  
**ԸՆԴՅԱՆ ՄԱՒԻՍԱԳԱՒԵԱՆ**

**ՀԱՄԻԿ ՍԱՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՍՏԵՆ**


HAMPIG SASSONIAN C - 88440  
 CSP - L.A.C. D -5- 232 44750  
 60-TH ST. WEST LANCASTER, CA, 93536  
 USA

**ՀԻՆԸ ՓՈՒՍԱՐԻՆԵ ՆՈՐՈՎ**  
 Մեծաքանակ եւ փոքրաքանակ վաճառք

**SINGER**

● ԿԱՐԻ ՍԵԷՆԱՆԵՐ գործատեղիներու եւ տան համար:  
 ● Շոգիով եւ պարզ ԱՐՈՒԿՆԵՐ:  
 ● ԿԱՐԻ ամէն տեսակի ՊԻՏՈՅԵՆԵՐ եւ ՍԱՆԸԵՆ:  
 Made in Japan  
 ● Կանխիկ եւ մասնավճարով:  
 ԷՅՈՒՊ հաստ. Մանուրիէ, քաղաքապետարանի դիմաց, սպքք Շամուն, հեռ. 04-401227  
 www.Singer Lebanon.com





ԹԵՆԻՍ. ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԱՍԹԵՐԶ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

ՍԱՐԳՍԵԱՆ ԴՈՒՐՍ ԶԳԵՑ  
ՖԻԼԻՓՈՒՍԻԱԸ  
ՍԱՄՓՐԱՍ ԵՒ ՔԱՖԵԼՆԻՔՈՎ  
ՅԱՂԹԱԿԱՆ, ԱԿԱՍԻՒՄ  
ՄԵԾԱԳՈՅՆ ՊԱՐՏԵԱԸ

Թենիսի Մասթերզ արջաշարքի (Թորոնթոյի մէջ) առաջին հանգրուանին, հայաստանցի Սարգիս Սարգսու- եան պարտութեան մատնեց աշխարհի 16րդ թենիսիսթի- նը՝ ամերիկացի Մարք Ֆիլիպուսիսը, արձանագրելով 6-4, 7-5 արդիւնքը:

3 միլիոն տոյարի պարգեւներ տրամադրող այս մրր- ցաշարքին (որ աշխարհի մեծագոյն տասը մրցաշարքե- րէն մէկն է) մեծագոյն պարտութիւնը եղաւ, սակայն, ամե- րիկացի Անտոնի Ակասի, որ 7-5 եւ 7-5 արդիւնքով տեղի տուաւ ֆրանսացի Ժերոմ Կոլմարի առջեւ: Աշխարհի թիւ մէկը մարաթոն այս մրցումին թէեւ ունեցաւ յա- յաջողութիւն, բայց Կոլմար եղաւ անգերազանցելի:

Ամերիկացի Փիթ Սամփրաս, աշխարհի թիւ երկուսը, պարտութեան մատնեց անձանօթ ֆրանսացի Միքայէլ Լոտրան՝ 5-7, 6-2 եւ 7-5 արդիւնքով, մինչ ռուս Եւկենի Բաճիկիսիցի 7-5, 3-6 եւ 7-5 արդիւնքով յաղթեց սպանա- ցի Ֆեռնանտո Վիսենթիին:

Աւստրալիացի Փաթրիք Ռաֆթերը, ամերիկացի Մայ- քըլ Զանկ եւ ֆրանսացի Նիքոլա Էսպիտէլ յաջողարար յաղթեցին բրիտանացի Արվինտ Փարմըրի, մարոքցի Հի- շամ Արագիին եւ արժանութիւնը Մարտին Զապալաթայի, մինչ չիլիցի Մարսելո Ռիոս 6-4, 3-6 եւ 6-3 արդիւնքով պարտութեան մատնեց բրիտանացի Թիմ Հենմանը:

Ստորեւ՝ Ա. հանգրուանի կարեւորագոյն մրցումնե- րուն արդիւնքները:

Ժերոմ Կոլմար (Ֆրանսա) - Անտոնի Ակասի (Մ. Ն.) 7-6 եւ 7-6

Փիթ Սամփրաս (Մ. Ն.) - Միքայէլ Լոտրա (Ֆրանսա) 5-7, 6-2 եւ 7-6

Եւկենի Բաճիկիսիցի (Ռուսիա) - Ֆեռնանտո Վի- սենթե (Սպանիա) 7-5, 3-6 եւ 7-6

Մարք Սաֆին (Ռուսիա) - Եոնաս Պիորքման (Շուեդ) 6-4, 1-6 եւ 6-3

Փաթրիք Ռաֆթեր (Աւստրալիա) - Արվինտ Փարմըր (Բրիտանիա) 6-1, 4-6 եւ 6-3

Մարսելո Ռիոս (Չիլի) - Թիմ Հենման (Բրիտանիա) 6-4, 3-6 եւ 6-3

Սարգիս Սարգսեան (Հայաստան) - Մարք Ֆիլիպու- սիս (Աւստրալիա) 6-4 եւ 7-6

Մայքըլ Զանկ (Մ. Ն.) - Հիշամ Արագի (Մարոք) 6-3 եւ 6-3

Նիքոլա Էսպիտէ (Ֆրանսա) - Մարտին Զապալա- Թա (Արժանութիւն) 6-3, 3-6 եւ 6-1

ԼՈՒՐԵՐ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼԵՍ

● ԱՆԳԼԻՈՅ 21 տարեկանին վար կրտսերներու ազ- ցային խումբին մաս կազմող նախկին միջնապահ Տէյ- վիտ Թոմսոնը երկէ լքեց Լիվերպոլը եւ միացաւ Քո- վենթրիին, փոխան 4 միլիոն տոյարի: Քովենթրիի պա- տասխանագրուները յայտնեցին, որ Թոմսոնը մինչեւ շա- րաթավերջ պիտի ենթակուի բժշկական քննութիւննե- րու, որմէ ետք չորս տարուան պայմանագրութիւն մը պիտի ստորագրէ իր նոր կազմին հետ:

Կլակնկայուի, որ ան առաջին անգամ ըլլալով իր նոր ակումբին շապիկը կրէ յառաջիկայ Յուլիս 12ին, Ալքաթ Ամսթերտամի դէմ տեղի ունենալիք ֆուլթայոյի բարե- կամական մրցումին, կամ շարաթ մը ետք՝ Միտրոպոլի- ոյի դէմ տեղի ունենալիք Անգլիոյ ֆուլթայոյի ախոյեա- նութեան Ա. հանգրուանի մրցումին:

Անցեալ ամիս Քովենթրիի Ինթեր Միլանի «ծախեց» Թոպի Քիմը, իսկ Միտրոպոլիոյի՝ Նոնի Ուլիքընը:

● ՏԵՐՊԻ ԲԱՆԻՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԿՐԿԱԳՄԻՆ ՄԻԿՈՆԵԿ ԼԱՆ- սի յետապահ Եուլ Մաուրենկոն, անոր փոխանցման հա- մար ֆրանսական կազմին վճարելով 750 հազար տոյար: 21 տարեկան յետապահ Եուլ, չորս տարուան պայ- մանագրութիւն մը ստորագրեց իր նոր ակումբին հետ:

Տերպիի մարզիչ Ճիմ Սմիթ անոր փոխանցման անդ- րադառնալով լուսաւ, թէ ան 2000-2001 եղանակին իր կազմին հետ դաշտ պիտի ներկայանայ իրբեւ հիմնական մարզիկ:

● ԼԻՊԵՐԻՒՅՑԻ ԺՈՐՃ ՈՒՆՅԱՆ, որ 1995ին աշխարհի տար- ւան յաւաքոյն մարզիկը ընտրուած է, ազատ փոխա- ցուումով մը միացաւ նոր բարձրագոյն դասակարգ բարձ- րացած Մանչեսթր Սիթիին, լքելէ ետք իր կազմը՝ Ա. Սէ Միլանը: 33 տարեկան Ունչան, որ անցեալ եղանակին իտա- յական կազմին փոխ տրուած էր Չելսիին, երկու տար- ւան պայմանագրութիւն մը ստորագրեց Մանչեսթր Սիթիի հետ:

Սիթիի մարզիչ Ճո Ռոյլ իմանալէ ետք, թէ Ունչան կ'ուզէ լքել իր ակումբը, անմիջապէս աշխատանքի սկը- սած էր եւ յաջողած՝ իր առաքելութեան մէջ:

Ռոյլ այժմ աշխատանք կը տանի նաեւ իր կազմին միացնելու Ունչանի համար, քոսթա Ռիքայի ազգային խումբին միջազգային յառաջապահ՝ Փաուսո Վանչո- փը, անոր համար վճարելով 6 միլիոն տոյար:

● ՉԱՐԼԻՔՆԻՒՆԻ պատասխանատուները շարաթավեր- րին յայտնեցին, թէ ձեռք ձգած են Ֆինլանտայի ազգա- կան խումբին մաս կազմող միջազգային յառաջապահ Եոնասթրոն Եոնասթրոն, անոր պակումբին՝ Ռէյնըրթրի վճա- րելով 750 հազար տոյար:

Մոնեղով շուկայի Եոնասթրոն, որ երբեք տարի առաջ Ֆրանսայի (Էսթրոնիա) փոխնցուած էր Ռէյնըրթրի, 1998- 99 եղանակին նշանակեց 17 կոլ, ութը՝ ախոյեանութեան մրցումներուն, իսկ հինգը՝ Եուլ. Է. Է. Ա. ի բաժանի մրցաշարքին: Անցեալ եղանակին, սակայն, իրբեւ պա- հետ մարզիկ նկատի առնուելով, ան նշանակեց միայն հետք կոլ:

ՅՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈԼԵՍ ԱՆՈՅՆԱՆՈՒԹԻՒՆ  
ԱՅՍՕՐ ԿԸ ՍԿՍԻ Բ. ԲԱՆԳՐՈՒԱՆԸ

Յրանսայի ֆուլթայո- լի 2000-2001 եղանակի ախոյեանութեան Բ. հանգրուանը կը բաց- ւի այսօր՝ Սրտան - Լիոն մրցումով, ապա վաղը տեղի կ'ունենան երկու ճակատումներ, իսկ մնացեալ վեց հանդի- պումները կը կատար- լին Շարաթ օր:

Շարթունայի գագաթի ճակատումը կը նկատ- լի Սէնթ Էթիէն - Մար- սէյի հանդիպումը, որ տեղի կ'ունենայ վաղը, Պէյլուքի ժամով՝ 20:45ին: Նույլ հե- տաքըքրական կրնայ չըլլալ նաեւ Մոնաքո - Նանթ ճակատումը:

Սէնթ Էթիէնի եւ Մարսէյի միջեւ ճակա- տումները միշտ ալ եղած են հետաքրքրա- կան, ւտք եւ բարձր մակարդակի: Եօթնա- սունակաւններուն, երբ երկու խումբերը կը նկատուէին ֆրանսա- կան ֆուլթայոյի հսկա- ները, անոնց միջեւ հանդիպումները կը սպասուէին անհամ- բեր: Այսօր Էսպիտէ- րը գրեթէ նոյնն է, միակ տարբերութեամբ, որ Սէնթ Էթիէն չունի իր նախկին հսկայը, մինչ Մարսէյ կը շարու- նակէ մնալ իր երկրին ամենէն աւելի մեծ ժո- դովրդականութիւն

վայելող կապը: Վաղուան մրցումին, Մարսէյի նոր մարզիչ՝ պրապիլի Ապէլ Պրա- կա կ'ըսէ, թէ այս եղա- նակին իր տղոցմէ կը սպասէ ֆիլիքսական ամուր պայքար, «որով- հետեւ 21րդ դարուն անկապ կը նկատուի նախապայման մար- վաշխարհին մէջ յաջո- ղութեան համար»:

Անցեալ տարուան ախոյեանը՝ Մոնաքո, որ պիտի հիւրընկալէ «Ռեյլին ղեղձանիկ- մեր»ը (Նանթ), անպայ- ման պիտի փորձէ իշ- խանապետական իր դաշտին վրայ յաղթել. թէեւ Նանթի իրին պա- տան չէ եւ միշտ ալ մեծ խումբերու դէմ արձա- նագրած է փայլուն ար- դիւնքներ, նոյնիսկ եթէ անիկա այսօր չի գտնը- լիր երբեմնի իր բարձ- րութեան վրայ:

Վաղը մայրաքաղա- քի կապը՝ Փարիզ Սէն Ժերմէն կը մեկնի Ռէն- նի դաշտը: Փ. Ս. Ժ. այս եղանակին կը նկատ- լի տիտղոսի գլխա- տը թակածուն, հետե- ւաբար պիտի փորձէ ստացին իսկ օրէն պար- տութիւն չարձանագ- րել եւ յաղթական վե- րադառնալ տուն: Պորտո պիտի մեկնի Բորնիա եւ ճակատի

Պասթիայի դէմ: Կղզիի կապը իր ջուրերուն մէջ միշտ ալ դժուար շունչ տուած է, հետե- ւաբար ատլանտեան հիւր կապմին համար յաղթանակը այդքան ալ դիւրին բան չէ եւ անոր առաքելութիւնը բաւական դժուար է:

Օքսէն, որ երեսուն տարուան ընթացքին առաջին անգամն է, որ դաշտ կը ներկայանայ ստանց իր բարիկամ- թիք ու սիրուն մար- վիչ Կի Ռուի, պիտի մեկնի Մէսի դաշտը, ուր Ժոէլ Միլըրի կապ- վը իր հողին վրայ պի- տի փորձէ երեք կէտ ապահովել ամէն գնով, ինչ որ դժուար կացու- թեան կրնայ մատուել Պուրկուի խումբը, որ առաջին հանգրուանի մրցումին տեղի տուած էր Սրտանի դիմաց:

- Ստորեւ՝ Բ. հանգրու- անի յայտագիրը.
- ԱՍՕՐ
- Սրտան - Լիոն
- ԱՎՐՈ
- Մոնաքո - Նանթ
- Սէնթ Էթիէն - Մարսէյ
- ՇԱՐՔՈ
- Ռէնն - Փ. Ս. Ժերմէն
- Պասթիա - Պորտո
- Լանս - Կէնկան
- Մէս - Օքսէն
- Սթրասպուրկ - Լիլ
- Թրուա - Թուլուզ

ՊՈՔՍԻԶ ՄԻԱՅՄԱԻ ՄԻՏԸԼՉՊՈՐՈՅԻ

Լազիո Ռոմայի խրուածք միջազգային յառաջապահ Ալէն Պոքսիչ, որ երկէ միա- ցաւ Միտրոպոլիոյի, այս- պիսով դարձաւ վերջին եր- կու օրերուն անգլիական կազմին միացած երրորդ կարեւորագոյն մարզիկը, յառաջապահներ ժոպէֆ - Տեպիլի ճոպէլ եւ Նոնի Ուլիքնէն ետք:

30 տարեկան Պոքսիչ, որուն փոխանցման գու- մարին մասին ոչինչ յայ- տարարուեցաւ, շատ հա- ւանաբար իր նոր ակում- բին հետ առաջին մրցումը կատարէ յառաջիկայ Կի- րակի օր, ակումբին «Ռի- վըրսայո» դաշտին մէջ:

Անցեալ Երեքշաբթի օր քամերուցի միջազգային մարզիկ Ճոպ լքեց ֆրան- սական Լանսը միացած էր Միտրոպոլիոյի, չորս տար- ուան պայմանագրութիւն մը ստորագրելով անոր:

հետ, փոխան 4,5 միլիոն տոյարի: Նոյն օրը տեղի ու- նեցած էր նաեւ Ուլիքնէն Քովենթրիին Միտրոպոլիոյ փոխանցումը, 3 միլիոն տո- յարի փոխարէն: Ան եւս առաջինին նման չորս տար- ւան պայմանագրութիւն մը ստորագրեց Պորտոյի հետ:

Իր կազմին նորեկ ան- դամներուն անդրադառ- նալով, Միտրոպոլիոյի մարզիչ Պրայոն Ռուպոնը երկէ հարցազրույցի մը ըն- թացքին ասաւ, թէ յաւաքեց պատրաստուած էր զգա- ցական կազմին հետ յա- սակարգի ախոյեանութե- թեան 2000-2001 եղանա- կին, որովհետեւ իր կազմը օժտած է յաւաքիկներու թիւով եւ պատրաստ է տիտ- ղոսին տիրանալու համար իր պայքարը սկսելու:

● ԼԻՄԻ ԲԵՐԳԱԿԱՆ Նայճըլ Մարթին երկէ եր- կու տարիով երկարաձգեց

իր պայմանագրութիւնը իր ակումբին հետ: Մայսիսով, ան մինչեւ 2004 Ֆուլակները պիտի կրէ իր ակումբին շա- պիկը, յայտնեց Լիմի նա- խագահ Փիթր Ռիտտոյի: Անցեալ քանի մը օրե- րուն, Փիթր հանդիպում ունենալով Մարթինի հետ կրցած էր համոզել, որ իր պայմանագրութիւնը երկա- րաձգէ, հակառակ անոր, որ անցիկացի բերդապահը յա- ռաջիկայ շարաթ պիտի ըլլայ 34 տարեկան:

Անոր պայմանագրու- թեան երկարաձգումին անդրադառնալով, Փիթր ռուս, թէ ան միակ մար- զիկն էր, որուն պայմա- նագրութիւնը նուազ քան երկու տարի էր: Այժմ, օա- կայն, ակումբին մաս կազ- մող բոլոր մարզիկներուն ալ պայմանագրութիւնը երկարաձգուած է երկար տարիներու վրայ:

ՌԻՎԱԼՏՕ ԿԸ ՄՆԱՅ ՊԱՐՍԵԼՈՆԱ

Պրապիլի միջազգային յառաջապահ Ռիվալտոն երկէ փոխադրուեցաւ համա- յունային հետ, երբ որոշեց մնալ «Նուրամփ», երեք տարուան նոր պայմանագրութիւն մը ստորագրելով անոր հետ:

Պարսելոնայի նոր նախագահ Խոսե Կասիլար, որ նախքան նախագահ իր ընտրը- լիլը (անցեալ ամիս) խոստացած էր իր կազմին մէջ պահել Ռիվալտոն, այսպիսով վերջ մը դրաւ ատենէ մը ի վեր մամուլը կարգեցնող լուրերուն, ըստ որուն պրա- փիլիպին լքելով իր կազմը պիտի փոխանցը- լիր Ա. Սէ. Միլանի:

Ոչ, անոր ակումբը եւ ոչ ալ Ռիվալտոն որեւէ յայտարարութիւն կատարեցին կնքը- ւած համաձայնութեան մասին, սակայն նախապէս Երոպայի եւ աշխարհի յաւա- գոյն մարզիկը ընտրուած Ռիվալտոն վատա- հաբար, որ յաւելնալ նոր վարձատրութիւն ստացած է:

ԵՐԲ ՊԱՐՏԵՐԴ ԶԵՍ ՀԱՏՈՒՅԵՐ...

Սպանիոյ ֆուլթայոյի ֆետերասիոնը կը քննարկէ, թէ երբեք ակումբներ փոխադրը- ւեցան վարի դասակարգ, որովհետեւ անոնք իրենց մարզիկներուն ունեցած պարտեքը չէին կրցած հատուցել:

Բ. դասակարգին մաս կազմող Մերի- տա փոխադրուեցաւ Գ. դասակարգ, իսկ Գ. դասակարգի Լոկոնեու եւ Մանչեսթր Ի. դասակարգ:

Մերիտա եւ Լոկոնեու, որոնք նախա- պէս մաս կը կազմէին Ա. դասակարգին, այժմ կը գտնուին շատ ցեղ կացութեան մէջ: Մերիտա, որ 1997-98 եղանակին բարձրացած էր Ա. դասակարգ, եղանակ մը չէր դիմացած եւ դարձեալ փոխադրը- ւած էր Բ. դասակարգ:

ՄԻՆՉ ԼՈԿՈՆԵՍ

Մինչ Լոկոնեու, որ 1997ին մաս կը կազմէր Ա. դասակարգին, անցեալ եղա- նակին փոխադրուեցաւ Գ. դասակարգ, Բ. դասակարգի ախոյեանութիւնը աւար- տելով 20րդ դիրքին վրայ:

Տատ հաւանաբար վերունշալ երեք կազմերուն ճակատագրին ենթարկուի նաեւ Գ. դասակարգի մաս կազմող Հեր- քելուս, եթէ չկարենայ իր պարտքերը վճարել մինչեւ ամսեկերը:

ՎԼԱՏԻՄԻՐ ՓՈՒԹԻՆ ԵՐԿԱՅ ՊԵՏԻ ԸԼԼԱՅ ՈԳԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒՆ

Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փուլթին ներկայ պի- տի ըլլայ Ողիմպիական խաղերուն, որոնք տեղի պիտի ունենան Միտնի (Աւստրալիա) մէջ, կը յայտնեն ռու- սական պաշտօնական աղբիւրները:

Փուլթին կ'ուզէ ռուս մարզիկներուն թիւ մէկ համա- կիրը եւ քաջաբերողը ըլլալ խաղերուն, որոնց բացումը տեղի կ'ունենայ յառաջիկայ 15 Սեպտեմբերին:

Ռուսիոյ Ողիմպիական յանձնախումբին մասով ծա- ւաչութեան պետը՝ Ալեքսանտր Ռաթնիկ կ'ըսէ, որ Փու- թին հրաւէր ստացած է Ողիմպիական Միջազգային Կո- միտէի նախագահ Խուան Անթոնիո Սամարանչէն եւ եթէ քաղաքական յոյժ կարեւոր կամ խճողուած յայտա- գիր մը չունենայ, անպայման ներկայ պիտի ըլլայ Միտ- նի:

Մանսթ Է, որ Վլատիմիր Փուլթին, ոչ միայն մարզա- սէր է, այլեւ մեծ մարզիկ մըն է: Ան մինչեւ օրս կանոնա- ւորապէս կը կիրարկէ իր նախնորած մարզախաղը՝ ժիւտօ:

Կրեմլին այս գծով ցարդ ոչինչ կը հաղորդէ: Ռուս միակ ղեկավարը, որ ներկայ եղած է Ողիմպիականին՝ նախկին Խորհրդային Միութեան նախագահ Լէոնիտ Պրեժնեւն է, որ 1980ին բացումը կատարեց խաղերուն, որոնք տեղի ունեցան Մոսկուայի մէջ եւ որոնց իրենց մասնակցութիւնը չբերին Միացեալ Նահանգներ, իրենք պարտութեան մատնուեցան Մոսկուայի մէջ եւ որոնք կա- յացան Լոս Անճելըսի մէջ, 1984ին, այս անգամ Խորհրդ- դային Միութիւնը իր մասնակցութիւնը չբերաւ, իր կար- գին պոլլոքթի ենթակցութեամբ խաղերը:

«Ընդհանրապէս մարզախաղի եւ յատկապէս ֆուլթ- պոլլը ամենէն աւելի քաղաքականացուած մարզն է թէեւ, սակայն ըստ երեւոյթի Ողիմպիական խաղերը սկը- սած են այդ իմաստով եւս «գարգառայ»: Անհատական մարզախաղերն են, ինչպէս՝ թենիս, հեծելաքաշ, որոնք քաղաքականացուած չեն, բայց հոն ալ մնալիս իր խոս- քը ունի ըսելիք: Այլապէս ինչպէս բացատրել կռիւ- մարտի մարզիկները վերիվայրումները:

Այս տողերը կը պատկանին ֆրանսացի ծանօթ թրդ- թակից Թիերի Ռոյանի: Այս տողերէն մեկնելով, կարելի է հաստատել հոն մատնանշուած որոշ երեւոյթներ: Այո՛, մարզախաղի յայտնապէս հետզհետէ կը քաղաքակա- նանայ եւ կը հետաքրքրէ քաղաքական անձնաւորու- թիւնները: Բաւարար է ազգ մը նստել պատուոյ թրի պիլներուն մէջ եւ հոն տեսնել քաղաքական անձնաւոր- ութեանց շարան մը: Ինչո՞ւ: Վստահար ժողովրդա- կանութիւն չաճելու յաւ հետ նկատելով այդ քայլը,

բայց նաեւ անոնց մէջ կան իրաւամբ մարզասէրներ, որոնք մէջ կ'իյնան այնչափ Ռուսիոյ նորընտիր նախա- ցահը: Այդ իմաստով ծանօթ մարզասէրներն են օրինակ Սպանիոյ Խուան Քարլոս թագաւորը, Միացեալ Նա- հանգներու արտաքին գործոց նախկին նախարար Հեն- րի Քլայնթըր, Արժանաւոր նախկին նախագահ Քարլոս Մրնկմ, Յորտանանի Ապտալա թագաւորը, Հայաստա- նի նախագահ Ռոպէրթ Քոչարեան, Ֆրանսայի վարչա- պետ Լիոնել ժոպիէն, Բրիտանիոյ վարչապետ Թոնի Պլեյ եւ ուրիշներ:

Միտնի Ողիմպիականին կը սպասուի մեծածիւր քա- ղաքական անձնաւորութիւններու ներկայութիւնը՝ Փու- թինի կողքին, որոնք շարքին՝ Ֆրանսայի նախագահ Ժաք Շիրաք եւ Միացեալ Նահանգներու նախագահ Պ

